



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

<< ----->> << ----->> 2018թ.

N -----

ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ <<ԱՍՊԱՐԵԶ>>
ԱԿՈՒՄԲԻ ԼՐԱԳՐՈՂ ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մկրտչյան

Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետարանի հասցեագրած Ձեր՝ 13.08.2018թ. հարցման հայտնվում է, որ սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի 15.06.2018թ. թիվ 44 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը քննարկում է Արմավիրի մարզպետարանի մուտքագրված, ինչպես նաև պետական այլ մարմիններից ՀՀ Արմավիրի մարզպետարանի վերահասցեագրված սոցիալական աջակցության խնդրանքով դիմած քաղաքացիների դիմումները, ինչպես նաև նրանց ընտանիքների սոցիալական վիճակի վերաբերյալ մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կազմված ուսումնասիրության ակտերը, դրանց հիման վրա որոշում է ընդունում ընտանիքին օգնություն հատկացնելու նպատակահարմարության վերաբերյալ և ներկայացնում է ՀՀ Արմավիրի մարզպետին: Ընտանիքներին տրամադրվող օգնության չափը որոշվում է՝ հիմք ընդունելով ընտանիքի կարիքավորության աստիճանը և ընտանիքի անդամների քանակը: Վերոնշյալ ընտանիքներին տրամադրված դրամական օգնության վերաբերյալ իրավական ակտերը հրապարակվում են մարզպետարանի պաշտոնական կայք-էջում:

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 23.08.2018 20:33:40 GMT+4

Подписано: MIRJANYAN GAGIK 2608810403

**ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻԻԶԱՆՅԱՆ**

Կատ. Հ. Հարությունյան

Հեռ. 0237 2 11 57